**New Testament Baptism**

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՄԿՐՏՈՒԹԻՒ

Որուն նմանը դուք հիմա այդ բանին մէջ
կանչուեցաք որ Քրիստոս ալ չարչարուեցաւ
եւ ձեզ ալ օրինակ թողուց որ անոր
հետքերուն հետեւիք·          II Պետրոս 2:21

Եւ եղաւ այն օրերը՝ որ Յիսուսը եկաւ
Գալիլեացիների Նազարեթիցը, եւ մկրտուեցաւ
Յովհաննէսից Յորդանանի մէջ·
Մարկոսի 1:9

Եւ բոլոր ժողովրդի մկրտուելու ժամանակին
եղաւ, որ երբոր Յիսուսն ալ մկրտուեցաւ՝ եւ
աղօթք էր անում, երկինքը բացուեցաւ:
Ղուկաս 3:21

Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք,
նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ
Հոգու անունովը·          Մատթէոսի 28:19

Ով որ հաւատաց եւ մկրտուեցաւ կ'փրկուի·
եւ ով որ չհաւատաց՝ կ'դատապարտուի:
Մարկոսի 16:16

Եւ նորա անունովը ապաշխարութիւն եւ
մեղքերի թողութիւն քարոզուիլ բոլոր
ազգերի մէջ Երուսաղէմից սկսած·
Ղուկաս 24:47

Հիմա թող ստոյգ գիտենայ Իսրայէլի բոլոր
տունը, որ «Աստուած նորան Տէր եւ Օծեալ
արաւ, սոյն այս Յիսուսին, որին դուք խաչեցիք:
Եւ երբոր այս լսեցին, սրտերումը զղջացին եւ
ասեցին Պետրոսին եւ միւս առաքեալներին,
Ի՞նչ անենք, մարդիկ եղբարք:
Պետրոսն էլ նորանց ասեց· Ապաշխարեցէք՝ եւ
ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուս
Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան
համար, եւ Սուրբ Հոգու պարգեւը կ'ընդունիք:
Գործք Առաքելոց 2:36-38

Բայց երբ Փիլիպպոսին հաւատացին, որ
Աստուծոյ թագաւորութեանը ու Յիսուս
Քրիստոսին անունը կը քարոզէր,
մկրտուեցան թէ՛ այրեր եւ թէ՛ կիներ:
(Վասն զի դեռ ո՛եւէ մէկուն վրայ
իջած չէր, հապա միայն Տէր Յիսուսին
անունովը մկրտուած էին:)
Գործք Առաքելոց 8:12,16

Փիլիպպոս իր բերանը բացաւ եւ գրքին այս
խօսքէն սկսելով՝ Յիսուսը քարոզեց անոր: Երբ
իրենց ճամբան կ'երթային, ջուրի մը քով եկան:
Ներքինին ըսաւ· «Ահա՛ ջուր, ալ ի՞նչ բան զիս
կ'արգիլէ մկրտուելէ»: [Եւ Փիլիպպոս ըսաւ
անոր· «Եթէ քու բոլոր սրտովդ կը հաւատաս՝
կարելի է»: Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ·
«Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս Որդի
Աստուծոյ է»:] Ու հրաման ըրաւ որ կառքը
կայնեցընեն: Երկուքն ալ իջան: Փիլիպպոս
ներքինին մկրտեց:     Գործք Առաքելոց 8:35 - 38

...«Սաւո՛ւղ եղբայր, Տէ՛րը զիս ղրկեց, այն
Յիսո՛ւսը, որ ճամբուն մէջ քեզի երեւցաւ, որ
կու գայիր, որպէս զի տեսութիւնդ ստանաս ու
Սուրբ Հոգիով լեցուիս»: Շուտ մ՛ը անոր
աչքերէն թեփերու պէս բաներ ինկան եւ իսկո՛յն
տեսաւ ու ելաւ մկրտուեցաւ:
Գործք Առաքելոց 9:17,18

Հիմա, ալ ի՞նչ կ'ուշանաս: Ելի՛ր, մկրտուէ՛ ու
մեղքերդ լուա՛յ (Ոսմանի, Տէրոջը) անոր անուն
նը կանչելով»:          Գործք Առաքելոց 22:16